Հայտարարություն

Հայտարարվում է մրցութ ՀՀ Տավուշի մարզի <<Խաչարձանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի ֆրանսերեն լեզվի /12 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում ՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է /Ձև 1/,

2. Փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն / Ձև 4/,

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները/ դրանցառկայությանդեպքում/,

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ՝ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 13- ին՝ ժամը 13 :00-ին, Տավուշի մարզի Խաչարձանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 093 46 84 36 հեռախոսահամարով: